րագործելն՝ պատրաստագոյն են, քան զԹշնամիսն հալածել և կամ կոտորել։ Զոր և ինքն փոյփոտա Ռուսքիյ զոր Խոռօնժիյ կու անուանեն, փախեաւ ի բերդն եմուտ և փակեցաւ, ընդ նմա և երկու որդիքն իւր և այլ մեծամեծք· և զամենայն զաւմիկք և զիզցք (?) Թոյլ ետուն անօրինացն, որ աւարեցին և գերեցին· բայց ինքեանքն այլ ի մէջ այդ բերդին՝ հազիւ զերծան· զոր եԹէ մի օր այլ կացեալ էին, Աստուածն ամենազօր զիւրենք ի ձեռս նոցա մատնեալ էր, բայց դարձեալ ողորմեցաւ և ոչ մատնեաց· զի բազմագութ է և ողորմած։ Եւ հանին գերի իբրեւ 30,000 հոգի, և այլ աւելի։

1567–8· Թվ· ՌԺԶ· Վաղճանեցաւ Կիւրեղ փոյԹն· Աստուած ողորմի հոգուն։

1567–8· Թվ· ՌԺԶ· Ֆռանգի դատաւորքն սկսան քաղքի բոլորն քարէ պարիսպ շինելոյ, բայց բազմաց հաճոյ չԹվեցաւ· քանզի մեծ և ծանր գործ սկսան· և զի զքաղաքացիսն յոյժ նեղելով բանեցնէին· և նոքա անմռունչ յօգւոյ հանելով գործէին զգործն զայն· և էին ի մէջ գերութեան իբրեւ զԻսրայելացիսն առ Փարաւոնիւն երբեմն։

1568· Թվ· ՌԺԷ· Պիղծ և անհաւատ Գաղարն ազգն եկաւ, և բազում գիւղք և գաւառ աւերեց և գերեցոյց, և մեծ իշխան ոմն անուն Լաքիյ՝ էառ ընդ իւր զօրս ոչինչ բազում, իբրեւ 5,000, և չոգաւ յետ նոցա, և եհաս և կոտորեց զԳաղարն· և բազում գերիք և աւարս ազատեաց և դարձոյց։ Բայց ի իւրոց անտի հեծելոց սակաւ մի կոտորեցան ի ԳաԹարէն· քանզի անօրէնքն այն բազում էին քան զնոքա։ Եւ այս ոչինչ է զարմանալի, զի կամօք է բանս· զի ով ոք զնոյն խաղն խաղասցէ՝ այնպէս լինելով է։ Աստուած զվերջն ի բարին փոխէ և տայ զօրութիւն քրիստոնէիցն։

1569· Թվ· ՌԺԸ· Բարեպաշտ Թագաւոր մեր Զիկմունդ Ակուստոս՝ մեծ ժողովք արաւ ի քաղաքն Լուպլին, զոր ամենայն աշխարհն Իլախից անդ կային ժողովեալ· և զի վաղուց հետէ ժողովք բազում լեալ էին վասն Իլախից և Լիդվայի երկրին միաբանութեան, այսինքն է որ կոչի յունիա (union)· և Թարգմանի զայս, զի այս երկու երկիրս զոր վերոյ ասացաւ՝ Իլախի և Լիդվայի, Թէպէտ տէրութիւն և Թագաւորութիւն մի է, բայց առանձին էին Իլախի երկրին դատաստանն և դատակնիք· զոր ի յայսմ ժողովքիս եղեւ խաղաղութիւն և միաբանութիւն ի վերայ ամենայն աշխարհի Իլախից· զի մի դատաստան լիցի և մի դատակնիք յաւիտեան, և այլ չփոփոխվի այս սահմանքս և կարգս։

1570· Թվ· ՌԺԸ· Նոյեմբ· ամսոյ ԺԲ· Իլովի արհի եպիսկոպոսն Գժոնց Սլոմովսքիյ եկաւ ի Կամենիցս· և ամենայն քաղաքիս բազմութիւն ել ընդ առաջ նորա, Ֆռանգ ազգ և Հայք· և Ռուզ ազգն լցան նախանձու և ոչ ելին, վասն երեք պատճառի· զի մեք Հայոց ազգս Ֆռանգի առաջն էաք, և նոքա ի մեր առաջն էին· և վասն այսպիսի հակառակութեանց նոցա չելին,